Համաձայնագիր N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/21»-04

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԱԴԻՈԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/21» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «25» հոկտեմբերի 2021թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (կողմերից յուրաքանչյուրն առանձին հիշատակման ժամանակ այսուհետ նաև՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ՝այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Կատարողից 21.10.2021թ. ստացված N Ռ/21 01-98 գրությունը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Կողմերի միջև 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պետության կարիքների համար ռադիոարտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/21» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրում ««Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ» և «Հ/Հ 220553334321000» բառերը փոխարինել համապատասխանաբար ««Հայբիզնեսբանկ» ՓԲԸ» և «Հ/Հ 1150009581381374» բառերով:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011430163	Հ/Հ 1150009581381374
ՀՎՀՀ 01539597	ՀՎՀՀ 01541435
Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան	Գործադիր տնօրեն՝ Գ. Խումարյան